ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկու «Զեփյուռ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր պաշտոնի համար՝ դաստիարակի 1.12 դրույքով:

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով ունի միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում կամ մանկավարժական գործունեության առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1)՝ լրացվում է տեղում,
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթն անց է կացվելու 2022 թվականի նոյեմբերի 4-ին, ժամը 11:00-ին, Աբովյան համայնք, գ. Մայակովսկի 10-րդ փողոց, 10/1 հասցեում:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի հոկտեմբերի 4-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-16:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել www.azdarar.am և https://www.abovyan.am/ կայքերում:

Մրցույթն անց է կացվելու երկու փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ https://escs.am/am/news/11978

Տեղեկությունների համար կարող եք զանգահարել +374 94 49 00 57 հեռախոսահամարով: